ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

9 դեկտեմբերի երեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

171
(3202)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՇԱՌԱՅՈՒՄ Է ՔՊ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ, ՈՉ ԹԵ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆԸ

Նիկոլ Փաշինյանի հեղափոխական ջրի շիշը բռնելով հայտնի դարձած ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյանը ոչ միայն «վիրավորված քաղաքացի» է, այլեւ իշխանական պատգամավոր, որը, փոխանակ հերքի հրապարակվածը կամ փաստերով ապացուցի իր՝ «պատվի ու արժանապատվության» խախտումը, ընտրել է ավելի հարմար ճանապարհ՝ փորձել պատժել ԶԼՄ-ին դատարանի միջոցով: Ու ցավալի է, որ Գավառի նստավայրի դատավոր Արթուր Աղամալյանի վարքագծից տպավորություն է ստեղծվում, թե դատարանը պատրաստ է կատարել այդ քաղաքական պատվերը:

Փաստաբան Գարիկ Սահակյանի փոխանցմամբ, 12.11.2025-ին Գավառի դատարանում նախնական դատական նիստի ժամանակ քննարկվողը կողմերի ներկայացրած ապացույցների գործին վերաբերելի եւ թույլատրելի լինելն էր: Ըստ օրենքի՝ դատարանը նախ պետք է գնահատեր հայցվորի՝ այս դեպքում Հայկ Սարգսյանի ներկայացրած ապացույցների վերաբերելիությունն ու թույլատրելիությունը, ապա միայն անցներ պատասխանող ընկերության նյութերին: Փոխարենը, դատավորն անհասկանալիորեն շրջանցել է այս կարգը եւ առանց մեր՝ «Ժողովուրդ» օրաթերթի պատասխանող կողմի ապացույցների վերաբերյալ դիրքորոշումը լսելու, միանգամից թույլ է տվել, որ հենց հայցվորի ներկայացուցիչը մեկնաբանի մեր առարկության հիմքում ընկած հանգամանքը հիմնավորող գրավոր ապացույցը: Սա արդեն ոչ թե տեխնիկական վրիպակ է, այլ կողմերի հավասարության բացահայտ խախտում:

Փաստաբան Սահակյանը դատարանում անմիջապես մատնացույց է արել դատավարական կոպիտ սխալը, բաց տեքստով վրդովմունք է հայտնել դատավորի հանդեպ՝ նշելով գործողության ոչ իրավաչափությունը եւ այս գործով դատավորի առերեւույթ կաշկանդվածությունը: Դրան հաջորդել է միջնորդություն նիստը հետաձգելու մասին՝ նպատակ ունենալով 15.12.2025-ին պատճառաբանված բացարկի միջնորդություն ներկայացնել գործը քննող դատավորի նկատմամբ:

Իհարկե, մենք հեռու ենք այն մտքից, որ դատավորը «սայթաքել» է՝ հօգուտ իշխանության ներկայացուցչի, ուստի իրավական բոլոր մեխանիզմներով պաշտպանելու ենք մեր իրավունքները: Առաջիկայում մանրամասն կանդրադառնանք այս նորաթուխ դատավոր Արթուր Աղամալյանի՝ դատավոր դառնալու հանգամանքներին, անցած ճանապարհին եւ դրանով ի ցույց կդնենք նրա անաչառության իրական պատկերը:

ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը՝ որպես դատարանների անկախության երաշխավոր թիվ մեկ կառույց, պարտավոր է մանրազնին ուսումնասիրել այս դեպքը, քանի որ դատավորը ակնհայտորեն իշխանությունից իր կախվածությունը չի կարողանում թոթափել:

---

Շիրակի նորանշանակ փոխմարզպետ Արտուշ Հովհաննիսյանը պաշտոնը ստանձնել է 2025 թվականի հունվարի 23-ին. այդ նշանակմանը նախորդող օրերին նա ձեռք է բերել նոր բնակարան Գյումրիում: Մինչ փոխմարզպետ դառնալը Հովհաննիսյանը 2016-2019 թվականներին աշխատել է Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունում որպես առաջատար մասնագետ, այնուհետեւ 2019-2020 թվականներին աշխատել է Սնդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնում որպես փորձագետ, իսկ 2020-2024 թվականներին եղել է նույն կենտրոնի պետի ժամանակավոր պաշտոնակատարը, որտեղ անցկացրած ժամանակն ամենաերկարն է եղել նրա պաշտոնական գործունեության մեջ: Նրա կինն է Հայաստան Հովհաննիսյանը, որը Գյումրու թիվ 41 հիմնական դպրոցի տնօրենն է, ինչի շուրջ մամուլում առաջացել են հարցեր՝ արդյոք այս նշանակման վրա ազդեցություն ունեցել է ամուսնու պաշտոնը, թե ոչ: Պաշտոնը ստանձնելիս ներկայացրած հայտարարագրից պարզ է դառնում, որ Արտուշ Հովհաննիսյանը 2007 թվականից ունի իրեն պատկանող բնակարան եւ ավտոտնակ Երեւանում, իսկ 2025 թվականի հունվարի 8-ին ձեռք է բերել բնակարան Գյումրիում: Նա չի հայտարարագրել տրանսպորտային միջոցներ, բանկային ավանդներ կամ թանկարժեք իրեր, իսկ հայտարարագիրը ներկայացնելու պահին ունեցած կանխիկ գումարը կազմել է 8 հազար ԱՄՆ դոլար, 3,8 մլն ռուբլի եւ 4 մլն դրամ: Մինչ փոխմարզպետ դառնալը ստացած եկամուտները կազմել են 244 հազար դրամ, իսկ վարկային պարտավորությունների մնացորդը պաշտոնը ստանձնելու պահին եղել է 916 հազար դրամ: Մամուլում հիշեցվում է, որ Հովհաննիսյանը հատկապես ճանաչելի դարձավ կորոնավիրուսի տարածման տարիներին, երբ լրագրողների հետ այցելում էր սննդի օբյեկտներ՝ վերահսկողության նպատակով, իսկ նրա նշանակումը փոխմարզպետի պաշտոնում անակնկալ չի դիտվել, քանի որ այդ մասին խոսվել էր վաղուց, եւ նա, շրջանառվող տեղեկություններով, համարվում է Շիրակի մարզպետի մտերիմ ընկերը:



---

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակի էլեկտրոնային գրանցումը ավարտվել է, եւ այժմ կուսակցության վարչությունը շարունակում է ամփոփել ցուցակը: Հիշեցնենք, որ դեռ հոկտեմբերի 30-ին կայացած ՔՊ վարչության նիստում որոշվել էր, որ իշխող ուժի կազմում առաջադրվել ցանկացող անձինք կարող են ինքնառաջադրվել նոյեմբերի 1-ից 30-ը՝ կուսակցության էլեկտրոնային հասցեին ուղարկելով իրենց ինքնակենսագրականը, իսկ անկուսակցականները՝ նաեւ վարչության առնվազն մեկ անդամի երաշխավորությունը: Ցանկում ընդգրկվելու համար սահմանվել էր նաեւ վճար՝ կուսակցականների համար 500 հազար դրամ, անկուսակցականների համար՝ մեկուկես միլիոն դրամ: «Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ պատգամավոր, ՔՊ վարչության անդամ Արուսյակ Մանավազյանից պարզել է, որ ընդհանուր առմամբ առաջադրվել են 383 անձինք, որոնցից ավելի քան չորս տասնյակը՝ անկուսակցականներ: Մեր տեղեկություններով՝ այժմ ՔՊ վարչությունը անցել է «զտման» փուլին՝ որոշելու, թե ովքեր են բավարար ռեյտինգով եւ կարող են հավակնել նոր խորհրդարան անցնելուն: ***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

---

Հակակոռուպցիոն կոմիտեն ԴԱՀԿ նախկին պետի հարազատներին, յուրաքանչյուրին 50 միլիոն դրամ գրավի դիմաց ազատ է արձակել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԴԱՀԿ նախկին պետ Միհրան Պողոսյանի եղբայրը (քեռու որդին)՝ «Միկշին»-ի սեփականատեր Տիգրան Հարությունյանը, եւս մեղադրյալի կարգավիճակ ունի: Հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ նախկին գլխավոր հարկադիր կատարողի վերաբերյալ քննվող քրեական վարույթով հանրային քրեական հետապնդումներ են հարուցվել նրա ազգականների նկատմամբ: Վերջիններս մեղադրվում են պաշտոնեական լիազորությունների չարաշահմանն օժանդակելու, ինչպես նաեւ խոշոր եւ առանձնապես խոշոր չափերով վատնմանն օժանդակելու համար: Ու մինչ Հակակոռուպցիոն կոմիտեն գործընթաց է սկսել ԴԱՀԿ նախկին պետի հարազատների շուրջ, վերջիններս նաեւ դատական համակարգում են կռիվ տալիս: Armlur.am-ը գրել էր, որ Միհրան Պողոսյանի քեռու որդին՝ «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ-ի սեփականատերը, 8 հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի: Նա պահանջում է պարտավորեցնել կոմիտեին «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ-ին պետական գրանցում տրամադրել Թիվ 02-040-0303-0010 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականության իրավունքի վերաբերյալ: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

ԱՌԱՋԱԴՐՈՒՄ

# ԿՆՅԱԶ ՀԱՍԱՆՈՎԸ ԿՎԵՐԱԴԱՌՆԱ՞ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

**«Ժողովուրդ» օրաթերթը Ազգային ժողովում կարճ ճեղազրույց ունեցավ ԱԺ 6-րդ գումարման պատգամավոր Կնյազ Հասանովի հետ՝ քննարկելով նրա առաջադրման փաստը եւ հնարավոր վերադարձը քաղաքական դաշտ՝ 8-րդ գումարման խորհրդարանում մանդատ ստանալու նպատակով:**

**-Պարոն Հասանով, Դուք դիմել եք ՔՊ նախընտրական ցուցակում ընդգրկվելու համար: Ստացվում է՝ պետք է վճարեք 1,5 միլիոն դրամ կուսակցության անդամակցության համար: Ո՞րն էր Ձեր դրդապատճառը, եւ ինչո՞ւ եք ցանկանում լինել հաջորդ խորհրդարանում:**

-Ես դեռեւս որեւէ վճարում չեմ կատարել, եւ եթե նման տեղեկություն շրջանառվի, ապա այն սխալ է: Ես կուսակցության անդամ չեմ: Թեեւ անխտիր մասնակցել եմ կուսակցության բոլոր միջոցառումներին, ազգային փոքրամասնությունների համար գործում է առանձնահատուկ կարգ, որը մյուս համամասնական թեկնածուների վրա չի տարածվում: Խոսքը Դոնթի բանաձեւի մասին է, ըստ որի՝ տարբեր կուսակցություններ կարող են նույն ազգային փոքրամասնությունից առաջադրել թեկնածուներ, իսկ ընտրություններից հետո՝ ըստ ստացված տոկոսների, որոշվում է՝ որ ազգային փոքրամասնության ներկայացուցիչը որ կուսակցության ցուցակով է անցնում:

Օրինակ բերեմ. երբ ես 6-րդ գումարման ԱԺ-ում պատգամավոր էի, նույն ազգային փոքրամասնության մյուս ներկայացուցիչը անցավ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ցուցակով: 7-րդ գումարման խորհրդարանում նույնպես տեղի ունեցան փոփոխություններ՝ ասորիներն իրենց տեղը փոխեցին այլ թեկնածուների հետ: Այսինքն՝ ամեն ինչ որոշվում է Դոնթի բանաձեւով, եւ պարզ կլինի միայն ԿԸՀ հաշվարկներից հետո՝ արդյոք ես կներգրավվեմ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ցուցակում, թե ոչ: Ամեն դեպքում՝ ես առաջադրվել եմ եւ մեծ ցանկություն ունեմ կրկին աշխատելու:

**-Պարոն Հասանով, եթե ստացվի այնպես, որ խորհրդարան անցնեք այլ կուսակցության ցուցակով, դա Ձեզ համար ընդունելի կլինի՞:**

-Ես այլ կուսակցության միջոցով չեմ կարող համագործակցել: Հնարավոր է, որ իմ ազգակիցներից այլ մեկը առաջադրվի որեւէ այլ կուսակցության կողմից: Բայց կրկին՝ ամեն ինչ որոշվելու է տոկոսային հարաբերությամբ՝ ըստ Դոնթի բանաձեւի: Դա ոչ թե իմ որոշումն է, այլ ԿԸՀ-ի հաշվարկի արդյունքը:

*Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

## ԻՏԱԼԻԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ Է ՄԵԿՆՈՒՄ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

Իտալիայի վարչապետ Ջորջիա Մելոնին հեռախոսազրույց է ունեցել Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու հետ:

Մելոնին վերահաստատել է Իտալիայի համերաշխությունն Ուկրաինային քաղաքացիական թիրախների վրա Ռուսաստանի նոր հարվածներից հետո եւ հայտարարել Ուկրաինայի էներգետիկ ենթակառուցվածքներին եւ բնակչությանն աջակցելու համար օգնության պարագաներ ուղարկելու մասին:

Հայտարարության մեջ նշվել է, որ իտալական ընկերությունների կողմից մատակարարված գեներատորները կուղարկվեն առաջիկա շաբաթներին:

Իտալիայի վարչապետը նաեւ վերահաստատել է իր աջակցությունը շարունակվող բանակցություններին եւ ԱՄՆ-ի գլխավորած ջանքերին՝ «արդար եւ երկարատեւ խաղաղություն» ապահովելու համար:

Նա ողջունել է Կիեւի պատրաստակամությունը՝ բարի կամքով մասնակցելու եւ կոչ է արել Մոսկվային նմանատիպ պատրաստակամություն ցուցաբերել:

Զելենսկին իր հերթին X-ում կատարած գրառման մեջ երախտագիտություն է հայտնել Իտալիային էներգետիկ ենթակառուցվածքներին աջակցելու նպատակով առաջիկա օրերին սարքավորումներ մատակարարելու համար:

«Մենք քննարկեցինք ամերիկյան կողմի հետ մեր համագործակցության արդյունքները, ինչպես նաեւ առկա հեռանկարներն ու մարտահրավերները: Դեռեւս կա համատեղ աշխատանք կատարելու՝ ապահովելու, որ Ռուսաստանն իսկապես հանձնառու լինի պատերազմի դադարեցմանը: Իտալիան հստակորեն աջակցում է իրական անվտանգության եւ պատերազմի վերսկսման ցանկացած բռնկում կանխելու անհրաժեշտությանը: Մենք համատեղ ջանքեր ենք նախապատրաստում Եվրոպայում՝ դիվանագիտությունն արդյունավետ դարձնելու համար», - նշել է նա գրառման մեջ:

Զելենսկին, ինչպես ակնկալվում է, առաջիկա օրերին կհանդիպի եվրոպացի առաջնորդների հետ՝ գրեթե չորս տարի տեւած հակամարտությանը վերջ դնելու վերաբերյալ խորհրդակցությունների շրջանակներում:

## 42–ԱՄՅԱ ԿՆՈՋԸ ՍՊԱՆՈՂԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

Քննչական կոմիտեից հայտնել էին, որ 42-ամյա կնոջ սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում հանրային քրեական հետապնդում է հարուցվել մեկ անձի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ եւ 10-րդ կետերով (սպանությունը՝ առանձին դաժանությամբ, շահադիտական դրդումներով) եւ 252-րդ հոդվածի 1-ին մասով (ավազակությունը): Վերջինս կալանավորվել է:

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ 42-ամյա կնոջը դանակի մի քանի հարվածներով սպանողին հայտնաբերել են Մեծամորում: Ավելին, Armlur.am-ի տեղեկություններով, 42-ամյա Արմինե Մկրտումյանին սպանելուց հետո ենթադրյալ մարդասպանը նրա վզնոցն ու ականջօղները գողացել է, տարել եւ գրավադրել:

ArmLur.am-ի փոխանցմամբ, քրեական ոստիկանների աշխատանքի արդյունքում հայտնաբերվել են նաեւ զարդերը:

Հիշեցնենք, որ Արմինե Մկրտումյանը անհետ կորած էր համարվում, ավելի ուշ նրան գտան սպանված: Ենթադրյալ մարդասպանը տաքսու վարորդ է ու, ըստ նախնական տվյալների, կնոջը առանձնակի դաժանությամբ սպանել էին՝ նրա ոսկյա զարդերը գողանալու նպատակով:

Shamshyan.com-ը գրել էր, որ Արմավիրի մարզի քաղաքներից մեկում հայտնաբերել ու ոստիկանության Վաղարշապատի բաժին են տեղափոխել Արմավիրի մարզի բնակիչ 35-ամյա Երվանդ Ա.-ին: Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ վերջինը փաստերի ճնշման տակ խոստովանել է, որ ինքն է սպանել Արմինե Ա.-ին, երբ իր կողմից վարած «Renault» մակնիշի ավտոմեքենայով իր զոհին որպես պատվիրատու տեղափոխելիս է եղել: Դեպքի փաստով Վաղարշապատի քննչական բաժնում «սպանություն» հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Քննիչի որոշմամբ՝ Երվանդ Ա.-ն ձերբակալվել է:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՔՆՆԱԴԱՏԵԼ Է ՀԱԿԱԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐՇԱՎԸ

Արամ Առաջինը քննադատել է Հայաստանի իշխանությունների հակաեկեղեցական արշավը:

«Երբ Հայաստանում անարդարություն է կատարվում, Անթիլիասը ո՛չ է ասում: Երբ Հայաստանում արժեքներն են արհամարհվում եւ խորհրդանիշներն են անտեսվում, Անթիլիասը ո՛չ է ասում եւ ո՛չ է ասել միշտ: Երբ Հայաստանում եկեղեցին ու եկեղեցականները տեսակ-տեսակ հալածանքների եւ ձերբակալությունների են ենթարկվում, Անթիլիասը այդ քաջությունը ունեցած է եւ ունի ո՛չ ասելու: Երբ Հայաստանում, ի վնաս մեր ժողովուրդի շահերի համազգային մեր գերագույն իդեալները անտեսվում են, Անթիլիասը ո՛չ է ասել եւ ո՛չ պիտի ասի», - Կիպրոսում պատարագի ժամանակ ասել է նա:

## ՋԱՆՔԵՐ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գերմանիայի արտաքին գործերի նախարար Յոհան Վադեֆուլը Չինաստան կատարելիք իր այցի նախաշեմին՝ դեկտեմբերի 7-ին, կոչ էր արել Պեկինին օգտագործել Ռուսաստանի վրա ունեցած իր ազդեցությունը՝ Ուկրաինայում խաղաղության հասնելու համար:

«Ուկրաինայի դեմ ռուսաստանյան ագրեսիվ պատերազմը, որը սպառնում է Եվրոպայում մեր անվտանգության կարեւորագույն շահերին, ցույց է տալիս, թե որքան սերտ են փոխկապակցված անվտանգությունը, բարգավաճումն ու ազատությունը Ասիայում եւ Եվրոպայում: Հրադադարի հասնելուն ուղղված դիվանագիտական ջանքերն ամբողջ թափով են ընթանում:

Իմ ելույթներում ես կկրկնեմ, որ ոչ մի այլ երկիր Ռուսաստանի վրա չունի այնպիսի ազդեցություն, ինչպիսին Չինաստանը, եւ չի կարող իր կշիռն օգտագործել այն աստիճան, որ Ռուսաստանին ի վերջո մղի Ուկրաինայի ինքնիշխանությունը հարգող լուրջ բանակցությունների պատրաստակամության: Մեր շահերից է բխում, որ Չինաստանը նպաստի Ուկրաինայում արդար եւ կայուն խաղաղության հասնելուն», - ասված է Վադեֆուլի ուղերձում:

Ըստ Գերմանիայի արտաքին գործերի նախարարի՝ միջազգային աճող լարվածության եւ աշխարհաքաղաքական ցնցումների շրջանում Չինաստանի հետ տեղեկատվության ուղիղ, ինտենսիվ փոխանակումն անհրաժեշտ է, նույնիսկ՝ անփոխարինելի:

«Մենք պետք է եւ ցանկանում ենք մշտապես կառուցողականորեն փնտրել Չինաստանի հետ միջազգային հրատապ խնդիրների համատեղ լուծման ուղիներ»,- ընդգծել է նա:

## «ՄԻՋԱՆՑՔ» ԵԶՐՈՒՅԹՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՉԷ ՄԵԶ ՀԱՄԱՐ

Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը վերահաստատել է, որ Հայաստանի տարածքով անցնող ճանապարհի վերաբերյալ Ադրբեջանի կողմից կիրառվող «միջանցք» եզրույթն ընդունելի չէ հայկական կողմի համար:

Այս մասին Գրիգորյանը նշել է Դոհայում ընթացող ֆորումի շրջանակներում կայացած «Հայաստան-Ադրբեջան տեւական խաղաղություն. Վաշինգտոնյան համաձայնագիրը եւ համատեղ ապագան» թեմայով պանելային քննարկման ընթացքում, որին մասնակցել է նաեւ Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւը:

«Վաշինգտոնի գագաթնաժողովում Հայաստանի, Ադրբեջանի եւ ԱՄՆ-ի ղեկավարները ստորագրել են փաստաթուղթ, որում այդ ճանապարհը կոչվում է TRIPP, մենք խոսում ենք այս եզրույթի մասին: Եվ մենք վստահ ենք, որ TRIPP-ը մեծ հնարավորություններ կբացի ոչ միայն տարածաշրջանի, այլեւ բիզնեսների ու երկրների համար, որոնք գտնվում են տարածաշրջանից դուրս», - ասել է Գրիգորյանը:

Քննարկման ընթացքում Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւը հայտարարել էր, որ կարեւոր է Վաշինգտոնում օգոստոսի 8-ին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունը տրանսպորտային հաղորդակցության եւ կապակցվածության վերաբերյալ՝ շեշտելով, որ այս կոնտեքստում Ադրբեջանում կիրառում են «Զանգեզուրի միջանցք» տերմինը: Շարունակելով միտքը՝ Հաջիեւը շեշտել էր՝ Ադրբեջանում գիտեն, որ այս հարցում հայկական կողմն այլ մոտեցում ունի՝ հույս հայտնելով, որ երկու երկրների միջեւ միակ խնդիրը կլինի տերմինոլոգիան:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Վաշինգտոնում օգոստոսի 8-ին ստորագրել են հռչակագիր, որի 4-րդ կետով, մասնավորապես, սահմանվում է. «Հայաստանի Հանրապետությունն աշխատելու է Ամերիկայի Միացյալ Նահանգների եւ փոխադարձաբար համաձայնեցված երրորդ կողմերի հետ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» («Trump Route for International Peace and Prosperity» (TRIPP)) հաղորդակցության ծրագրի իրականացման շրջանակը սահմանելու նպատակով:

Ավելի ուշ ՀՀ վարչապետը ԱԺ-ում հայտարարել է, որ «Թրամփի ուղու» շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2026 թվականի երկրորդ կեսին:

«Մինչեւ այս տարվա վերջ թղթի վրա պետք է նկարագրենք բոլոր մանրամասները: 2026 թվականի առաջին կեսին պետք է համաձայնեցնենք, իսկ երկրորդ կեսին պետք է սկսենք շինարարական աշխատանքները: Սա է պլանը», - ասել էր վարչապետը:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԵՏՔԵՐՈՎ

# ԽՈՒԶԱՐԿԵԼ ԵՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՏՈՒՆԸ

**ArmLur.am–ին հասած տեղեկություններ համաձայն՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի կալանավորված ամբիոնի վարիչի տանը իրականացվել է խուզարկություն, որի ընթացքում իրավապահները հայտնաբերել ու առգրավել են մի շարք խմիչքներ: Մասնավորապես՝ հայտնաբերված կոնյակն իրավապահները եւս կարեւոր են համարել իրական վարույթի շրջանակում: Սակայն դեռ հստակ չէ, թե կոնյակը ում կողմից կամ ինչի դիմաց է փոխանցվել: Կալանավորված ամբիոնի վարիչի հետ ձերբակալվածներից մեկը բուհի նախկին ուսանող է:**

Ավելին՝ ամբիոնի վարիչի հարազատները ահազանգում են, որ վերջինս ունի կալանքի հետ անհամատեղելի առողջական խնդիրներ, սակայն իրավապահ համակարգին ներկայացված միջնորդությունները մերժվել են, եւ գործընթացը շարունակվում է:

Հիշեցնենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեն կալանավորել է ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ամբիոնի վարիչին՝ կաշառք ստանալու մեղադրանքով: Եվս երկու անձ ձերբակալվել է՝ համապատասխանաբար կաշառք ստանալուն օժանդակելու եւ կաշառք տալու մեղադրանքներով: Նրանց նկատմամբ կալանք կիրառելու միջնորդությունները դատարանը բավարարել է:

Նշենք նաեւ, որ 2025թ. հոկտեմբերի 17-ին նույն մարմնի կողմից իրականացվող մեկ այլ քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել էին Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գեւորգյանը եւ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը: Հակակոռուպցիոն կոմիտեի փոխանցմամբ, նրանք մեղադրվում են համալսարանի աշխատակիցներից կազմված հանցավոր կազմակերպություն ստեղծելու եւ ղեկավարելու, առանձնապես խոշոր չափերի վատնում եւ խարդախություն կատարելու, ինչպես նաեւ կաշառք ստանալու համար: Գործի շրջանակում ձերբակալվել էին նաեւ համալսարանի այլ աշխատակիցներ:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԵԿԵՂԵՑՈՒ «ՆՈՐՈԳՄԱՆ» ՔԱՐՏԵԶ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ֆեյսբուքի իր էջում ներկայացրել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նորոգման ճանապարհային քարտեզ Կտրիճ Ներսիսյանի հեռացումից հետո.

«1. Կաթողիկոսական տեղապահի ընտրություն՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում գործող մեխանիզմների տրամաբանությամբ:

2. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կանոնագրքի ընդունում. Կանոնագիրը պետք է անդրադառնա.

ա) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւորականի բարեվարքության կանոններին եւ դրանց ապահովման երաշխիքներին,

բ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ֆինանսական թափանցիկությանը եւ դրա ապահովման երաշխիքներին,

գ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ապաքաղաքական լինելու անհրաժեշտությանը եւ դրա ապահովման երաշխիքներին,

դ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեության համապատասխանությանը ՀՀ Հարկային օրենսդրությանը եւ դրա ապահովման երաշխիքներին. ՀՀ օրենսդրությունը իր հերթին կնախատեսի երաշխիքներ, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեությունից գոյացած եւ պետական բյուջե վճարված հարկերը եւ տուրքերը ամբողջությամբ կվերադարձվեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն,

ե) հոգեւոր ծառայողների սոցիալական երաշխիքներին եւ դրանց ապահովման երաշխիքներին այնպես, որ հոգեւոր ծառայողները կուտակային կենսաթոշակային համակարգից, եկամտային հարկի վերադարձից, սոցիալական կրեդիտներից, առողջապահության համընդհանուր ապահովագրությունից լիարժեք օգտվելու հնարավորություն ստանան (ներկայումս հոգեւոր ծառայողների հիմնականում չեն օգտվում այդ համակարգերից, վարձատրության արձանագրված համակարգ չունենալու պատճառով):

3. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրություններ՝ համաձայն նոր Կանոնագրքի:

***Հ.Գ. Կանոնագիրը քննարկում եւ ընդունում է նման իրավասություն ունեցող եկեղեցական մարմինը: Տեղապահի միջնորդության դեպքում, Կառավարությունը խորհրդատվական աջակցություն կցուցաբերի Կանոնագրքի նախագծի մշակման աշխատանքներին»,-** նշված է գրառման մեջ:

## ԱԽՔ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ԴՈՀԱՅՈՒՄ

Դոհա կատարած աշխատանքային այցի ընթացքում Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիպել է Կատարի Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարի տեղակալ Համադ Քամիս ալ-Քուբայիսիի հետ:

Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակը: Կողմերն անդրադարձել են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ նախաստորագրված համաձայնագրին, տարածաշրջանում հաստատված խաղաղությանը եւ ապաշրջափակման համատեքստում առաջացող տնտեսական լայն հնարավորություններին ու դրանցում Կատարի հնարավոր մասնակցությանը:

Արմեն Գրիգորյանն ու Համադ Քամիս ալ-Քուբայիսին քննարկել են Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող գործընթացները, ինչպես նաեւ արտատարածաշրջանային անվտանգային իրավիճակը:

## ՇՄ ՆԱԽԱՐԱՐԸ ԳՈՐԾՈՒՂՎԵԼ Է ՔԵՆԻԱ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթեւոսյանը գործուղվել է Քենիայի Հանրապետություն (Նայրոբի)՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ասամբլեայի 7-րդ նստաշրջանին (UNEA-7) մասնակցելու նպատակով:

UNEA-ն անցկացվում է երկամյա պարբերականությամբ եւ հանդիսանում է բարձր մակարդակի ամենախոշոր հարթակներից մեկը՝ նվիրված գլոբալ բնապահպանական քաղաքականությանը եւ օրակարգերին: UNEA-7-ը փաստացի նաեւ COP17-ից առաջ կայանալիք վերջին խոշորագույն բարձրաստիճան միջազգային միջոցառումներից է:

Նախարարի մասնակցությունը միջոցառմանը կարեւոր նշանակություն ունի՝ որոշումների կայացման գործընթացում լիարժեք ներգրավված լինելու, անհրաժեշտ գործընկերային կապերի եւ հաղորդակցությունների ստեղծման, ինչպես նաեւ բանակցային աշխատանքների պատշաճ ապահովման տեսանկյունից:

Նախարար Համբարձում Մաթեւոսյանը կունենա մի շարք երկկողմ հանդիպումներ եւ առանցքային միջոցառումներին հանդես կգա ելույթներով:

UNEA-7-ի շրջանակում նախատեսվում է նաեւ COP17-ի լոգոյի թողարկումը եւ հայեցակարգի ներկայացումը՝ կարեւոր ազդակ հանդիսանալով առաջիկա գագաթնաժողովի հաղորդակցային եւ քաղաքական օրակարգի համատեքստում:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

# ՑՄԱՀ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԸ ԲԱՆՏԻՑ ԱԶԱՏԱՆԳՈՒՄ Է

**5 տարի առաջ ազատ արձակված ցմահ դատապարտյալ Աշոտ Մանուկյանը այժմ կալանավորված է, նրա փաստաբան Հովհաննես Համբարձումյանը «Ժողովուրդ» օրաթերթին բաց նամակ է ուղարկել, որտեղ դիմում է ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին:**

Վերջինս գլխավոր դատախազից արդարություն է խնդրում. «Ի սկզբանե չեմ ընդունել ինձ առաջադրված մեղադրանքները, քանի որ երբեւէ որեւէ առնչություն չեմ ունեցել որեւէ տեսակի թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ, մասնավորապես այս դեպքում որեւէ տեղեկություն չեմ ունեցել, որ մեքենաներում թմրամիջոցներ կան:

Անցած ամիսների ընթացքում համապատասխան կառույցների կողմից կատարվել են լայնածավալ քննչական, դատավարական եւ օպերատիվ-հետախուզական աշխատանքներ, խուզարկվել են մեքենաների կցորդիչները, որոնց մեջ ոչինչ չի հայտնաբերվել, հերքվել է այդ փաստական տվյալը: Խուզարկվել են իմ բնակության հասցեն, բջջային հեռախոսներս, բանկային տվյալները եւ այլն: Այս ամենի արդյունքում որեւէ տեղեկություն, փաստական տվյալ կամ ապացույց չի հայտնաբերվել, որ ես երբեւէ զբաղվել կամ զբաղվում եմ թմրաշրջանառությամբ:

Հարգելի՛ տիկին դատախազ, սույն բաց նամակով խնդրում եմ Ձեզ, որպեսզի Ձեր անմիջական միջամտությամբ դադարեցվի քրեական հետապնդումը, քանի որ, ինչպես նշել եմ, ես որեւէ անօրինական, քրեորեն պատժելի արարք չեմ կատարել, ուժերիս եւ ժամանակիս ներածին չափ փորձել եմ օգտակար լինել հասարակությանը»:

Հիշեցնենք, որ 2025 թվականի օգոստոսի 5-ին ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ ՀՀ երեք քաղաքացիներ, որոնցից մեկը նախկինում ցմահ դատապարտված եւ պայմանական վաղաժամկետ ազատված, հանցակցելով այլ երկրում գտնվող անձանց հետ, իրացնելու նպատակով մաքսանենգությամբ Հայաստան են տեղափոխել առանձնապես խոշոր չափերով «Մեթամֆետամին» եւ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցներ, որից հետո ձերբակալվել են ՆԳՆ ոստիկանության աշխատակիցների կողմից:

Վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

Կոմիտեն չէր հայտնել, ով է ցմահ դատապարտյալը: ArmLur.am-ի բացառիկ տեղեկություններով՝ նա Աշոտ Մանուկյանն է, որը ազատ էր արձակվել 3 տարի առաջ: Ցմահ դատապարտյալ Աշոտ Մանուկյանը դատապարտվել է 24 տարի առաջ 3 զինվորների սպանության համար, ինքը նույնպես զինծառայող է եղել:

***ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ՄԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՆ ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նախաձեռնված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետն ու համապատասխան ստորաբաժանման ղեկավարը նախնական համաձայնությամբ, խմբի կազմում կաշառք են պահանջել եւ ստացել:

Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնում են, որ, մասնավորապես, պարզվել է, որ հիշյալ պաշտոնատար անձինք, նախապես տեղյակ լինելով նույն վարչական շրջանում գտնվող ավտոտնակների զբաղեցրած հողամասերի վարձակալության պայմանագրերի ժամկետները լրացած լինելու մասին, վարձավճարների իրական չափերը նվազեցնելու եւ պայմանագրերի երկարաձգման գործընթացն անխոչընդոտ իրականացնելու, ինչպես նաեւ ավտոտնակների սեփականատիրոջ անունից պատկան մարմիններ դիմումներ մուտքագրելու համար նրանից պահանջել եւ ստացել են կաշառք:

Կաշառք ստանալու համար գլխավոր մասնագետին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Քրեական օրենսգրքի նույն հոդվածով մեղադրանք է ներկայացվել նաեւ ստորաբաժանման պետին, ում նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ՀՀ-ից բացակայելու արգելքն ու պաշտոնավարման կասեցումը: Մեղադրանք է ներկայացվել նաեւ պաշտոնատար անձանց կաշառք տված ավտոտնակների սեփականատիրոջը:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

## ՄԱՀՎԱՆ ԵԼՔՈՎ ՎՐԱԵՐԹ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի ավագ քննիչ Նարեկ Պետրոսյանի որոշմամբ՝ ձերբակալվել է Երեւանում հաշվառված 29-ամյա Գոհար Մանուկյանը:

Հիշեցնենք, որ դեկտեմբերի 5-ին՝ ժամը 23:26-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ էր ստացվել, որ Երեւան քաղաքի Պռոշյան փողոցում տեղի է ունեցել ՃՏՊ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից երկու մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ բախվել են «Hyundai», «Tesla», «Kia», «Opel», «BYD», «Nissan» եւ «Hyundai» մակնիշների ավտոմեքենաները. ինչի հետեւանքով «Kia» մակնիշի ավտոմեքենայի վարորդը տեղում մահացել է:

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը՝ «Tesla» մակնիշի ավտոմեքենայի վարորդը տեղի ուժերով տեղափոխվել է բժշկական կենտրոն:

Փրկարարները փակել են «Kia» մակնիշի ավտոմեքենայի գազի բալոնը եւ հոսանքազրկել «Tesla» մակնիշի ավտոմեքենան:

## ՉԿՆԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 4-ին Տավուշի մարզի պարեկները Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցում հայտնաբերել են «ՎԱԶ 2104» մեքենա՝սիգ ձկնատեսակով բեռնված: Լոռու մարզի Սպիտակ համայնքի բնակիչ 58-ամյա վարորդը մեքենայով հանդերձ տեղափոխել է Համայնքային ոստիկանության Սեւանի բաժին:

Պարզվել է, որ 58-ամյա տղամարդու մեքենայում 210 սիգ տեսակի ձուկ կա. բուսական եւ կենդանական աշխարհին պատճառված վնասի չափը գնահատվել է 470-500 հզ. դրամ: Տղամարդը հայտնել է, թե հայտնաբերվածը ձեռք է բերել անծանոթ անձից:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

Հիշեցնենք՝ նոյեմբերի 20-ից փետրվարի 1-ը Սեւանա լճում խստիվ արգելվում է սիգի արդյունագործական որսը:

Որսի կանոնները խախտելու, ինչպես նաեւ ապօրինի որսի դեպքում նախատեսվում են օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

## ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

ՆԳՆ ոստիկանությունը ներկայացրել է օպերատիվ իրավիճակը հանրապետությունում դեկտեմբերի 5-8-ը:

Բացահայտվել է 246 հանցագործություն, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:

Մասնավորապես՝

59 դեպք՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու,

26 դեպք՝ թմրանյութի հայտնաբերման,

17 դեպք՝ խարդախության,

16 դեպք՝ ֆիզիկական ներգործության,

15 դեպք՝ հոգեկան ներգործության,

14-ական դեպք՝ մարմնական վնասվածք պատճառելու, անձնական ունեցվածքի գողության,

11 դեպք՝ փաստաթղթի կեղծիքի,

9 դեպք՝ սառը զենքի հայտնաբերման,

8 դեպք՝ խուլիգանության,

5 դեպք՝ զենք-զինամթերքի առգրավման,

4 դեպք՝ վստահված գույքի հափշտակման,

3-ական դեպք՝ ծառերը, թփերը ապօրինի հատելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու,

2-ական դեպք՝ համակարգչային հափշտակության, բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու, բնակարանային գողության, թմրանյութի իրացման:

Բացահայտվել են նաեւ կողոպուտի, ընդերքի պահպանման կամ օգտագործման պահանջները խախտելու, բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու, հողը փչացնելու, հրազեն հափշտակելու, հետամտելու, անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալու եւ այլ դեպքեր:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է 7-ը, որից 5 դեպք՝ անձնական ունեցվածքի գողության:

Հայտնաբերվել է 24 հետախուզվող, կամավոր ներկայացել է 5-ը:

Գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 3 դեպք:

## ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ԻՐԱՑՈՒՄ

Համայնքային ոստիկանության Մալաթիայի բաժնի եւ Ոստիկանության Գվարդիայի ծառայողները համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում դեկտեմբերի 6-ի գիշերը՝ժամը 3-ի սահմաններում, Հարավարեւմտյան Բ-2 թաղամասի շենքերից մեկի մոտ հայտնաբերել, թմրամիջոց իրացնելու կասկածանքով ձերբակալել եւ բաժին են տեղափոխել Երեւանի բնակիչ 17-ամյա երկու աղջիկների:

Անձնական խուզարկությամբ նրանց մոտ հայտնաբերվել է 64 փաթեթ՝ ընդհանուր 61,19 գրամ քաշով: Պարզվել է, որ նրանք 16 փաթեթ արդեն տեղադրել էին Շենգավիթ եւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում:

Կազմված փաստաթղթերը եւ ձերբակալվածները ներկայացվել են նախաքննական մարմին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 5-ից 8-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 246 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԶ

### ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՓՈԽՏՆՕՐԵՆԻՆ ԾԵԾԵԼՈՒ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԸ 6 ՏԱՐԻ Է ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ճամբարակի բնակիչ Հրայր Լազարյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա 2019թ. ապրիլի 15-ին Արծվաբերդի անտառտնտեսության տարածքում կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր եղանակով բռնություն է գործադրել տարածքում գարնանային ստուգումներ իրականացնող Արծվաբերդի անտառտնտեսության պահպանության գծով տնօրենի տեղակալ Նորայր Պապյանի նկատմամբ՝ երկու անգամ հարվածներ հասցնելով նրա կրծքավանդակին: Դա կատարվել է, երբ Պապյանը փորձել է կանխել Հ. Լազարյանի կողմից փայտանյութի ապօրինի դուրսբերումը: Մաթեւոս Լազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2019թ. ապրիլի 15-ին Արծվաբերդի անտառտնտեսության տարածքում Արմեն Շառյանի եւ Վահե Դանիելյանի հետ նախնական համաձայնությամբ, առողջության համար վտանգավոր բռնություն են գործադրել Ն.Պապյանի նկատմամբ՝ոտքերով հարվածելով նրա մարմնի տարբեր մասերին՝ նրա առողջությանը պատճառելով թեթեւ վնաս, երբ վերջինս փորձել է բացահայտել եւ արձանագրել Հ. Լազարյանի կողմից, Մ. Լազարյանի, Ա. Շառյանի եւ Վ. Դանիելյանի մասնակցությամբ փայտանյութի ապօրինի դուրսբերումը: Հ. Լազարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1-ին մասով, Մ. Լազարյանին, Վ. Դանիելյանին եւ Ա. Շառյանին՝316 հոդվածի 2-րդ մասով: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը 2023թ. դեկտեմբերի 20-ին վճռել է Հ. Լազարյանին նշանակել պատիժ՝ ազատազրկում՝1 տարի 11 ամիս 26 օր ժամկետով: Մ. Լազարյանին նշանակել պատիժ՝ ազատազրկում՝2 տարի 4 ամիս 18 օր ժամկետով, Վ. Դանիելյանին նշանակել պատիժ՝ազատազրկում՝2 տարի 5 ամիս 1 օր ժամկետով. Ա. Շառյանին նշանակել պատիժ՝ազատազրկում՝2 տարի 4 ամիս 8 օր ժամկետով:

Դատարանը վճռել է 4 մեղադրյալներին նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 1 տարի ժամկետով: Տավուշի մարզի դատախազությունը վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել՝խնդրելով Մ. Լազարյանի, Վ. Դանիելյանի եւ Ա. Շառյանի նկատմամբ ազատազրկման ձեւով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով ճանաչել անթույլատրելի: 2024թ. մայիսի 7-ին վերաքննիչ դատարանը որոշել է Հ. Լազարյանի, Մ. Լազարյանի, Վ. Դանիելյանի եւ Ա. Շառյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել եւ քրեական գործի վարույթը կարճել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով: Այդ ժամանակ որպես գլխավոր դատախազի տեղակալ պաշտոնավարող Արթուր Պողոսյանը վճռաբեկ դատարան բողոք է ներկայացրել: 2025 թ. հունիսի 25-ին վճռաբեկ դատարանը որոշել է Մ. Լազարյանի, Վ. Դանիելյանի եւ Ա. Շառյանի վերաբերյալ վերաքննիչ քրեական դատարանի 2024 թ. մայիսի 7-ի որոշումը բեկանել եւ նրանց մասով վարույթը փոխանցել վերաքննիչ քրեական դատարան:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

## ՊԱՏՇԱՃ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՆ

# ՄԻՔԱՅԵԼ ՍՐԲԱԶԱՆԸ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ

**ԱԺ «Հայաստան» խմբակցության դատգամավոր Գառնիկ Դանիելյանը դեկտեմբերի 8-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում անդրադարձավ Միքայել սրբազանի գործին՝ ընդգծելով, որ վերջինս անհապաղ վիրահատության կարիք ունի եւ այդ հարցը արդեն բարձրացվել է իր կողմից:**



«Ուզում եմ ձեր ուշադրությանը հրավիրել Միքայել Սրբազանի հետ կապված գործին: Միքայել սրբազանը անհապաղ վիրահատության կարիք ունի, ես նաեւ այդ հարցն եմ բարձրացրել:

Այդ զգայուն շատ կարեւոր հարցը պետք է օր առաջ լուծվի, Սրբազանին պիտի հնարավորություն ընձեռվի իր բժշկի հսկողությամբ եւ իր բժշկի անմիջական մասնակցությամբ բուժում ստանալու: Ցավով ուզում եմ նաեւ ասել, որ այս տխուր վիճակագրությունը նաեւ մեզ զգոնության, սթափության առիթ է տալիս, որ այս հարցերի վերաբերյալ մենք այնպես պիտի անենք, որ այդ 23 մահվան դեպքը չդառնա 24:

Ցավով ուզում եմ նաեւ ասել, որ կարող է այդ 24-րդը, Աստված մի արասցե, լինի նաեւ սրբազան հայրը: Ես պահանջատեր եմ լինելու, եւ իմ պահանջը պիտի անհապաղ բավարարվի, սրբազանը պիտի պատշաճ բուժօգնության արժանանա», - ասել է նա:

Դանիելյանը հավելեց, որ Մարդու իրավունքների պաշտպանին դիմում է ներկայացվել, սակայն այն հետ է վերադարձվել ձեւական խնդիրների պատճառով. «Խնդիրը բյուրոկրատական քաշքշուկների մեջ է: Մենք ուղղում ենք անելու եւ դիտարկելու ենք՝արդյոք դրանից հետո էլի արհեստական խոչընդոտներ կստեղծվեն, թե ոչ»:

Պատգամավորը շեշտեց, որ առաջին քրիստոնյա ժողովուրդ լինելով՝ «չենք կարող սրբազան հորը եւ մյուս սրբազաններին պահել այդ պայմաններում», քանի որ դա կարող է անդառնալի հետեւանքների բերել եւ «ոչ մեկին պատիվ չի բերում»:

ԱԺ-ում լրագրողների հետ ճեպազրույցում Սրբուհի Գալյանը արձագանքեց այս մտահոգություններին՝ նշելով. «Միքայել սրբազանի հետ կապված որեւէ ծայրահեղ խնդիր այս պահին արձանագրված չէ: Կձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները նրա առողջության պահպանման համար»: Գալյանը պնդեց, որ համապատասխան դիմումը առողջապահական կառույցներին չի ներկայացվել:

Հիշեցնենք, որ մեղադրական եզրակացության համաձայն՝ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին մեղադրանք է առաջադրվել այն հիմքով, որ, լինելով Շիրակի թեմի առաջնորդ եւ օգտվելով իր ընտրազանգվածի ու հանրային հետեւորդների վստահությունից, 2024 թվականի փետրվարի 3-ին եւ 2025-ի հունիսի 21-ին ՋԼՄ-ների հետ հարցազրույցների ընթացքում հրապարակային կոչեր է հնչեցրել՝ իշխանությունը զավթելու ուղղությամբ:

*ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԹԱԻԼԱՆԴԻ ԵՎ ԿԱՄԲՈՋԱՅԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ

Թաիլանդի արեւելքում գտնվող Ուբոն Ռաչաթհանի նահանգի երկու շրջաններում Կամբոջայի հետ նոր բախումների ժամանակ զոհվել է առնվազն մեկ թաիլանդցի զինվոր, չորսը վիրավորվել են:

Այս մասին դեկտեմբերի 8-ին հայտարարել է Թաիլանդի զինվորական ծառայությունը: Հայտարարության մեջ նշվել է, որ Թաիլանդն օդային հարվածներ է հասցրել Կամբոջայի հետ վիճելի սահմանի երկայնքով:

«Թաիլանդական կողմը սկսել է օգտագործել ինքնաթիռներ մի քանի տարածքներում ռազմական թիրախներին հարվածելու համար»,- ասվում է հայտարարության մեջ:

Թաիլանդի բանակը հայտարարել է, որ Կամբոջայի զինված ուժերը BM-21 հրթիռներ են արձակել Թաիլանդի քաղաքացիական տարածքների ուղղությամբ՝ հավելելով, որ զոհերի մասին հաղորդագրություններ չկան: Կամբոջայի պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ մի քանի օր տեւած սադրիչ գործողություններից հետո Թաիլանդի զինված ուժերն առավոտյան հարձակումներ են սկսել իրենց ուժերի վրա երկու վայրերում եւ հավելել, որ կամբոջական զորքերը չեն հակադարձել: Հուլիսին սահմանային վեճը վերածվել էր հնգօրյա հակամարտության, որի հետեւանքով զոհվել էր առնվազն 48 մարդ:

### ԿՈՆԳՐԵՍԸ ՉԵՂՅԱԼ Է ՀԱՄԱՐԵԼ

Ամերիկյան Կոնգրեսը մտադիր է չեղյալ հայտարարել 1991 եւ 2002 թվականների երկու օրենքներ, որոնք ԱՄՆ նախագահին թույլ են տալիս ռազմական գործողություններ իրականացնել Մերձավոր Արեւելքում: Համապատասխան դրույթները ներառված են ընթացիկ ֆինանսական տարվա (սկսվել է հոկտեմբերի 1-ին) պաշտպանական բյուջեի նախագծում, որը դեմոկրատներն ու հանրապետականները համաձայնեցրել են ամերիկյան օրենսդիր մարմնում:

ԱՄՆ Սահմանադրությունը պատերազմ հայտարարելու լիազորությունը տալիս է ոչ թե նախագահին, այլ Կոնգրեսին: Սակայն վերջին տասնամյակներում ամերիկացի առաջնորդները շատ լայնորեն են մեկնաբանել արտասահմանում ռազմական ուժ կիրառելու օրենսդրական լիազորությունները, այդ թվում՝ էապես նոր գործողություններ սկսելու համար: Կոնգրեսի մի քանի անդամներ ներկայացրել են բանաձեւեր, որոնք պահանջում են, որ պետության ղեկավարը ռազմական ուժ կիրառի միայն օրենսդրական լիազորությամբ: Սակայն այդ բանաձեւերից ոչ մեկը դեռեւս չի ընդունվել:

Արդյունքում, երկու կուսակցությունների ներկայացուցիչները որոշել են չեղյալ համարել այն երկու օրենքները, որոնց վրա ամերիկացի առաջնորդները հիմնվել են վերջին տարիներին Մերձավոր Արեւելքում ուժ կիրառելիս:

Կոնգրեսում ավելի վաղ ձեւավորվել էր երկու պալատների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով՝Ներկայացուցիչների պալատի եւ Սենատի կողմից պատրաստված պաշտպանական բյուջեի տարբեր նախագծերի մանրամասները համաձայնեցնելու համար: Պաշտպանական բյուջեի համաձայնեցված նախագծերը, որպես կանոն, հաստատվում են առավելագույնս կարճ ժամկետներում:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 36 պատահար, 1 մարդ մահացել է, 51-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»

## ԿԻՍՈՒՄ Է ԵՎՐԱՏԵՍԻԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿԻ՝ ԴԵՊԻ ԵՐԱԶԱՆՔ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆ

«Հայէկոնոմբանկը» մեծ սիրով եւ ոգեւորությամբ ստանձնել է «Մանկական Եվրատեսիլ 2025» երգի մրցույթի գլխավոր հովանավորությունը: Թբիլիսի մեկնելուց առաջ բանկը նախաձեռնել էր հանդիպում Հայաստանի պատվիրակի՝ 12-ամյա Ալբերտ Արմենակյանի հետ՝ եւս մեկ անգամ հիացմունք հայտնելու եւ հաջողություն մաղթելու համար:

«Այս ստեղծագործությունը ոչ մեկին անտարբեր չի թողնում, եւ մենք եւս բացառություն չենք: Մենք անչափ ոգեւորված ենք այս ստեղծագործությամբ եւ առավել քան վստահ ենք, որ Ալբերտը մեծ հաջողություն է ունենալու: «Հայէկոնոմբանկի» ղեկավարությունն ու անձնակազմը շատ ուրախ են սատարել Ալբերտին այս կարեւոր ճանապարհին:

Բառերով դժվար է նկարագրել, թե որքան բարություն, ջերմություն ու լույս կա Ալբերտի մեջ: Մենք հավատում ենք, որ Հայաստանն այս տարի ունի հաջողելու բոլոր նախադրյալները: Եվ ի սրտե հաջողություն ենք մաղթում Ալբերտին եւ Առաջին ալիքի թիմին», - նշեց «Հայէկոնոմբանկի» Մարքեթինգի բաժնի պետ Արման Տոնիկյանը:

Հանդիպմանը մասնակցած երեխաները մեծ ոգեւորությամբ իրենց հարցերն ուղղեցին Ալբերտին. նրանք հիացած էին Ալբերտի աշխատասիրությամբ, վճռականությամբ եւ դրական էներգիայով: Տաղանդավոր տղան խորհուրդ տվեց երեխաներին երբեք չհանձնվել, եթե կա երազանք, եւ ամեն ինչ անել նպատակին հասնելու համար:

Երեխաները նաեւ նվերներ էին պատրաստել Ալբերտի համար: Նրանցից մեկը, երգից եւ տեսահոլովակից ոգեշնչված, նվեր-կտավ էր պատրաստել: Մյուսն իր հետ բանկի խորհրդանշական արջուկն էր բերել՝ հույսով, որ այն կօգնի Ալբերտին հաջող ելույթ ունենալ:

Երեխաներն Ալբերտի հետ միասին Brave Heart երգից մի հատված երգեցին՝ անկեղծորեն ոգեւորելով նրան եւ համոզմունք հայտնելով, որ այս տարի Հայաստանը հաղթելու է Մանկական Եվրատեսիլ երգի մրցույթում:

86 86 | aeb.am

«Հայէկոնոմբանկը» վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

---

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Նաիրա Գեւորգի Ամիրխանյանի դիպլոմը՝ տրված Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանից 1996 թվականին:

Դիպլոմի սերիան եւ համարը՝ Ա N 031700:

Գրանցման՝ թիվ 3387:

Համարել անվավեր:

IDBank

Գ

# ԲԱՆԿԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

**IDBank-ը մասնակցել է Տնօրենների հայկական ինստիտուտի (AIoD) 10-րդ տարեդարձին նվիրված բացառիկ համաժողովին՝ «Տնօրենների խորհուրդները Հայաստանում. մարտահրավերներ եւ հնարավորություններ», որը միավորել էր տնօրենների խորհուրդների նախագահների, ղեկավարների, միջազգային փորձագետների եւ քաղաքականություն մշակողների:**

AIoD-ի տասնամյա գործունեությունը կարեւոր դեր է խաղացել Հայաստանում կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման, պատասխանատու եւ հաշվետու կառավարման գործում: IDBank-ը, լինելով AIoD-ի ակտիվ գործընկեր եւ որակյալ կառավարման առաջամարտիկ, կարեւորում է նման հարթակների ստեղծումը, որտեղ ձեւավորվում են երկրի ապագա ինստիտուցիոնալ եւ տնտեսական լուծումները:

Համաժողովի բացմանը խոսքով հանդես եկավ Ելենա Խաչվանքյանը՝ AIoD խորհրդի նախագահ եւ IDBank-ի խորհրդի անդամ, նա նաեւ ընդգծեց բանկի եւ ինստիտուտի համագործակցության կարեւորությունը: Նրա խոսքով՝ բանկը վերջն տարիներին մեծ ջանքեր է ներդրել իր խորհրդի ե՛ւ բազմազանությունը բարելավելու, ե՛ւ կորպորատիվ կառավարման պրակտիկաները ուժեղացնելու գործում. «Բանկը խորհրդի օրակարգում ներառում է այնպիսի հարցեր, որոնք կարեւոր են ինչպես բանկի երկարաժամկետ եւ կայուն զարգացման, այնպես էլ ռիսկերի կառավարման տեսանկյունից: Ամուր կորպորատիվ կառավարումը նպաստում է վստահության ամրապնդմանը՝ կարգավորող մարմինների, հանրության, հաճախորդների եւ աշխատակիցների շրջանում, քանի որ խորհրդում պրոֆեսիոնալ անդամները կկարողանան բալանսավորել ռիսկերը եւ բանկը առանց մեծ խոչընդոտների՝ հաշվի առնելով շահակիցների տարբերի խմբերի շահերը, կիրագործի ռազմավարությունը: IDBank-ը նույնպես կիսում է այն արժեքը, որ տարածում է Տնօրենների հայկական ինստիտուտը»:

Միջոցառման ընթացքում պանելային քննարկման մասնակիցները կիսվում էին փորձով ու քննարկում, թե ինչպես կարող են տնօրենների խորհուրդներն ավելի մեծ ազդեցություն ունենալ կազմակերպությունների արդյունավետության, նորարարության եւ կայունության վրա: Մասնակիցներն ընդգծեցին, որ ռազմավարական մտածողությունը, կառավարման բարձր պատասխանատվությունը եւ բարեվարքությունը երկարաժամկետ հաջողության առանցքային պայմաններն են:

Տնօրենների հայկական ինստիտուտի տնօրեն Արմենուհի Հովակիմյանն ընդգծեց ինստիտուտի առաքելությունն ու բանկերի եւ ֆինանսական կառույցների հետ բարենպաստ համագործակցության կարեւորությունը. «Ֆինանսական կազմակերպությունները գործ ունեն տարբեր մարդկանց ֆինանսների հետ, ինչը միշտ ռիսկային է, եւ որպեսզի ռիսկը զսպվի ու բաշխվի նաեւ կոլեգիալ որոշումներ կայացնելու ձեւով, հետեւաբար ֆինանսական համակարգն առաջինն է ներդրել եւ զարգացրել բավական լավ աշխատող խորհուրդները: Այս միջոցառման շրջանակում մեզ միացավ նաեւ IDBank-ը, որ կորպորատիվ կառավարման մեծ ջատագովներից է»:

IDBank-ը մշտապես մեծ ուշադրություն է դարձնում կորպորատիվ կառավարմանը, թափանցիկությանը եւ տնօրենների խորհրդի աշխատանքի շարունակական արդյունավետության բարձրացմանը՝ ունենալով նպատակ ստեղծել ավելի ուժեղ եւ մրցունակ բանկային միջավայր:

ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է
ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԵՎԱՆՈՒՄ ՕԴԻ ՈՐԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՆՎԱԶՈՒՄ ԵՆ

Երեւանում օդի որակի ինդեքսի միջինացված արժեքները նոյեմբերին եղել են չափավոր կամ զգայուն խմբերի համար անառողջ միջակայքում, իսկ դեկտեմբերի առաջին շաբաթվա վերջին կայաններից ստացված տվյալների համաձայն՝ ցուցանիշները նվազում են:

Այս մասին Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ընթացքում հայտնեց Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը՝ ներկայացնելով չափման սարքերից ստացված տվյալները:

Երեւան քաղաքի շինհրապարակներում տեղադրված օդի մոնիթորինգի 184 կայաններից ստացված տվյալների համաձայն՝ 2025 թվականի նոյեմբերին օդի ինդեքսի միջինացված արժեքը PM 2,5-ի համար կազմել է 142, իսկ PM 10-ի համար՝ 64: Այս արժեքները գտնվում են չափավոր կամ զգայուն խմբերի համար անառողջ միջակայքում:

«2024 թվականի նույն ժամանակահատվածում PM 2,5-ը կազմել է 101, PM 10-ը՝ 53:

2025 թվականի նոյեմբերի 20-30-ն ընկած ժամանակահատվածում AQI-ի (օդի որակի) ինդեքսի միջինացված արժեքը PM 2,5-ի համար կազմել է 180. սա այն ժամանակահատվածն է, երբ դիտվել է օդի որակի կտրուկ վատթարացում: Իսկ անցած շաբաթվա վերջի՝ կայաններից ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ տվիչների ցուցանիշները համեմատաբար նվազում են»,- ասաց նա:

## «ՏԱԹԵՎԵՐ»-Ը՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՃՈՊԱՆՈՒՂԻ

«Տաթեւեր» ճոպանուղին չորրորդ անգամ արժանացել է հեղինակավոր միջազգային World Travel Awards մրցանակին՝ հաղթելով «աշխարհի առաջատար ճոպանուղի» անվանակարգում: Հայկական ճոպանուղին այս տարի եւս գերազանցել է մրցակիցներին Բոլիվիայից, Բրազիլիայից, Վիետնամից, Կանադայից, Նոր Ջելանդիայից, ԱՄՆ-ից եւ ՀԱՀ-ից: Նախկինում «Տաթեւեր»-ը Հայաստանին այս անվանակարգում հաղթանակ էր բերել 2021, 2023 եւ 2024 թվականներին:

Բաց քվեարկության արդյունքներով «Տաթեւեր»-ի հաղթանակը հայտարարվել է Բահրեյնում World Travel Awards 2025 պաշտոնական մրցանակաբաշխության ժամանակ:

World Travel Awards մրցանակը համարվում է զբոսաշրջության ոլորտի ամենահեղինակավոր միջազգային մրցանակներից մեկը: Այն ամեն տարի ճանաչում եւ պարգեւատրում է համաշխարհային զբոսաշրջության ու հյուրընկալության ոլորտներում ակնառու նվաճումները: Մրցանակը հաճախ անվանում են զբոսաշրջային «Օսկար», քանի որ այն շնորհվում է ոլորտի լավագույն նախագծերին՝ կատարելագործման ձգտման, բարձրակարգ սպասարկման եւ նորարարական մոտեցումների համար:

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ՄՇԱԿՈՒՅԹ

ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ. ՊԱՏԱՐԱԳ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՕՐԱԿԱՐԳՈՎ

# ՎԵՀԱՓԱՌԻ ԱՆՈՒՆԸ ԴԱՐՁՅԱԼ ՉԻ ՀԻՇԱՏԱԿՎԵԼ

**Դեկտեմբերի 7-ին Գյումրիու Սուրբ Աստվածածին Մայր Եկեղեցում՝ Յոթ Վերքում, կրկին մատուցվել է կիրակնօրյա պատարագ, որին մասնակցել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:**

Պատարագիչը ոչ թե Շիրակի թեմի հոգեւորական էր կամ այնտեղ ծառայող որեւէ քահանա, այլ շրջիկ հոգեւոր սպասավոր, ով համաձայնել էր պատարագը կազմակերպել վարչապետի օրակարգով՝ այդ թվում՝ Վեհափառ Հայրապետի անունը չհիշատակելով:

Պատարագն առաջնորդել են Փաշինյանին միացած մի շարք արքեպիսկոպոսներ, այդ թվում՝ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը: Այս անգամ վարչապետի կողքին պատարագին մասնակցել էր նաեւ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը: Եկեղեցում ներկա էին իշխանական թեւի այլ ներկայացուցիչներ՝ ՔՊ-ական պատգամավորներ Վահագն Ալեքսանյանը, Հայկ Կոնջորյանը, Ջուլիետա Ազարյանը, Էմմա Պալյանը, Կարեն Սարուխանյանը, Վլադիմիր Վարդանյանը, Սարիկ Մինասյանը, ինչպես նաեւ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը, առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանը, «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպության ղեկավար Արթուր Սիմոնյանը եւ այլ պաշտոնյաներ:

Չնայած Փաշինյանին հաջողվել էր գտնել պատարագ մատուցող հոգեւորականի, գյումրեցիները իշխանական ներկայացուցիչներին այնքան էլ ջերմությամբ չեն ընդունել: Տեղացի քաղաքացիների մի մասը պահանջել է ազատ արձակել կալանավորված Միքայել եւ Բագրատ սրբազաններին:

Նշենք, որ եկեղեցին ամբողջությամբ շրջափակված էր մեծաթիվ ոստիկաններով: Պատարագից հետո Նիկոլ Փաշինյանը իր ֆեյսբուքյան էջում գրառում է կատարել՝ առաջարկելով, որ յուրաքանչյուր պատարագից առաջ՝ ժամը 10:55-ին, եկեղեցիներում հնչի Հայաստանի պետական օրհներգը՝ «պետականության ներքին եւ վերին հարթությունների կապը պահպանելու» նպատակով:

Հետաքրքիրն ու զավեշտալին այն է, որ պատարագի այս փոփոխությունը առաջարկում է այն նույն Նիկոլ Փաշինյանը, ով ժամանակին պնդում էր՝ «պետությունը չի կարող միջամտել եկեղեցու գործերին»:

*ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ*

ՄԱՐԶԱԿԱՆ

## Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՊԱՐՏՎԵՑ 1/8-ՐԴ ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ

Դուբայում անցկացվող բռնցքամարտի աշխարհի առաջնությունում Հայաստանի ներկայացուցիչ, 75 կգ քաշային Արարատ Հարությունյանը չհաղթահարեց 1/8-րդ եզրափակիչի արգելքը:

Երկրորդ մենամարտում Հարությունյանը մրցեց Ղազախստանը ներկայացնող Ալբայխան Ժուսուպովի հետ եւ պարտվեց 0:5 հաշվով:

Առաջին ռաունդում Հարությունյանի գրոհները նպատակին չէին հասնում: Ղազախ բռնցքամարտիկը դիպուկ էր հարվածաշարերում: Այս ռաունդում մրցավարները հաղթանակը տվեցին Ալբայխան Ժուսուպովին:

Երկրորդ ռաունդում մրցակիցը Հարությունյանին նոկդաունի ենթարկեց: Ռինգի մրցավարը հաշիվ բացեց եւ թույլ տվեց շարունակել մենամարտը: Այս ռաունդում էլ մրցավարները հաղթանակը շնորհեցին ղազախ բռնցքամարտիկին:

Երրորդ ռաունդում Հարությունյանն ավելացրեց ճնշումը եւ ավելի ագրեսիվ մենամարտ վարեց ռինգի կենտրոնից:

Ժուսուպովը խուսափողական մարտ էր վարում, փախչում գրոհներից: Փոխադարձ հարվածաշարերից մեկի ընթացքում ռինգի մրցավարը հերթական անգամ կանգնեցրեց, հաշիվ բացեց Հարությունյանին: Հայ բռնցքամարտիկ դժգոհեց, քանի որ նոկդաուն չէր գրանցվել:

Մենամարտի ավարտից հետո Արարատ Հարությունյանը չկարողացավ զսպել արցունքները:

Առաջին մենամարտում Արարատ Հարությունյանը 5:0 հաշվով հաղթել էր Ինդոնեզիայի ներկայացուցիչ Ալֆինո Ցեզարին:

Ռուդիկ Մկրտչյանի գլխավորած հավաքականից աշխարհի առաջնության 4-րդ մրցումային օրը հաղթանակներ են տարել Նարեկ Հովհաննիսյանը (63.5 կգ) եւ Ժիրայր Սարգսյանը (57 կգ):

## ԷԴՈՒԱՐԴ ՍՊԵՐՑՅԱՆԸ՝ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԽԱՂԱՑՈՂ

Հայաստանի հավաքականի ավագ էդուարդ Սպերցյանը ճանաչվել է Ռուսաստանի Պրեմիեր լիգայի առաջնության 18-րդ տուրի «Կրասնոդար» - ԲԿՄԱ հանդիպման լավագույն խաղացող:

Չեմպիոնները հաղթել են 3:2 հաշվով: Ամբողջ հանդիպումն անցկացրած էդուարդ Սպերցյանը դարձել է գոլային փոխանցման հեղինակ: Այս մրցաշրջանում սա նրա 13-րդ գոլային փոխանցումն էր:

«Կրասնոդարը» 40 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը:

Երկրորդ տեղում գտնվող «Զենիթը» հետ է 1 միավորով:

ԺԱՄԱՆՑ

## ՀՆԱԳԵՏՆԵՐԸ ԳՏԵԼ ԵՆ ԽՈՐԱՆԱՐԴԱՁԵՎ ԳԱՆԳ




Մարդաբանության եւ պատմության ազգային ինստիտուտի (INAH) հնագետները հայտնել են խիստ անսովոր գտածոյի՝ խորանարդաձեւ մարդկային գանգի հայտնաբերման մասին, որը գտնվել է Մեքսիկայի Տամաուլիպաս նահանգի Բալկոն դե Մոնտեսումա հնագույն բնակավայրի տարածքում, գրում է Live Science-ը:

Ենթադրվում է, որ գանգը պատկանել է միջին տարիքի տղամարդու, որն ապրել է մոտ 1400 տարի առաջ՝ մ.թ. VI-VII դարերում: Համեմատական վերլուծության արդյունքում գիտնականները պարզել են, որ այս ձեւը խիստ տարբերվում է նախկինում արձանագրվածներից. մանկության տարիներին կատարվող դեֆորմացիային բնորոշ սովորական ձգված կամ սրածայր «կոնաձեւ» գանգերի փոխարեն այս գանգն ունի հարթ գագաթ, իսկ գլուխը «զուգահեռանիստի» կամ «խորանարդի» տեսք ունի:

Հետազոտողներն ընդգծում են, որ թեեւ գանգի արհեստական դեֆորմացիան հազվադեպ երեւույթ չէ Մեզոամերիկայի հնագույն մշակույթների համար, նման ոճ (հարթ, «խորանարդաձեւ» տեսքով) այս տարածաշրջանում նախկինում չի հայտնաբերվել:

Հետազոտության հեղինակները ենթադրում են, որ գլխի ձեւափոխման նման եղանակը կարող էր կապված լինել որոշակի սոցիալական խմբի պատկանելիության, էթնիկ ինքնության կամ կարգավիճակի հետ: Հետազոտողները դեռ հստակ բացատրություն չունեն. գանգերի ձեւերի առատությունը վկայում է հնագույն Մեքսիկայում մշակութային ավանդույթների շատ ավելի բարդ եւ բազմազան պատկերի մասին:

## ՆՈՐ ՖԻԼՄ

Հայկ Մարգարյանը (ՀՏ Հայկո) եւ Միքայել Աբրահամյանը (Միշո) համատեղ ջանքերով ունկնդիրների համար կապահովեն նոստալգիկ վերադարձ 2000-ականների Հայաստան: «Հայ տղեք»-ի մասին կենսագրական ֆիլմի նկարահանումները մեկնարկելու են գալիք տարվա աշնանը, իսկ մեծ էկրաններ այն կբարձրանա 2027 թվականի դեկտեմբերի 2-ին: Հայտնում է BRAVO.am-ը:

«Մի կողմ դնելով մեր ուղիղ կապը պատմության հետ՝ մեր նպատակն է, որ այն հենց որպես ֆիլմ արժեք լինի նույնիսկ օտարի համար»,- նշել է ռեփեր Միշոն:

Հայկ Մարգարյանի համար նախագիծը կարեւոր է ոչ միայն «Հայ տղեք»-ի պատմությունը եւ հայկական ռեփ մշակույթի ստեղծումը վավերագրելու տեսանկյունից. «Այն նոր շունչ է հայկական կինեմատոգրաֆիայում, որի հիմքում ընկած են իրական դրաման եւ մարդկային փոխհարաբերությունները»:

Ռեժիսոր Գոգա Խաչատրյանն էլ նշել է, որ «Հայ տղեք»-ը հերթական կենսագրական ֆիլմ չի լինելու. «Վերարտադրում ենք 2000-ականները, Հայաստանի անդերգրաունդ երաժշտական իրականության էներգիան: Պատմելու ենք խմբի կազմավորման, վերելքի, սկանդալների, բաժանման մասին, եւ ոչ միայն: Մենք մի ամբողջ դարաշրջան ենք վերակենդանացնում էկրաններին»:

Սպասվում է ոչ միայն էմոցիոնալ երաժշտական ատրակցիոն, այլեւ դրամատիկ շրջադարձերով պատմություն, որն ընդգրկելու է ժամանակաշրջանն ամբողջությամբ ու հասնելու է մեր օրեր, տեղեկացնում է Cinemix-ը:

*● Դեկտեմբերի 12-ին՝ 12:00-ին, Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում տեղի կունենա «Սա քեզ, սանտա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.500-3.500 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Որո՞նք են Մասնագիտական կողմնորոշման եւ կարողությունների զարգացման կենտրոնի հիմնական գործառույթները:**

*Նորայր Գրիգորյան (33 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Մասնագիտական կողմնորոշման եւ կարողությունների զարգացման կենտրոնն իր կանոնադրական գործառույթների շրջանակում հիմնականում իրականացնում է.

1. հանրակրթության համակարգում, մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնառողների, կրթության համակարգից դուրս մասնագիտության, աշխատանքի եւ զբաղմունքի հարցերում հստակ կողմնորոշում չունեցող, վերամասնագիտացման եւ վերաորակավորման, աշխատաշուկայի արագ փոփոխվող պայմաններին հարմարցվելու կարիք ունեցող անձանց՝ տարիքային առանձնահատկություններով տարբերակված մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանության մշակում,

2. նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների, համալիր սոցիալական ծառայությունների եւ զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում, սոցիալական այլ ծառայություններ իրականացնող կառույցներում մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի խորհրդատվության համակարգի ներդրման մոդելների եւ մեթոդաբանության մշակում եւ աջակցություն,

3. մասնագիտական ուսումնական հաստատություններում կարիերայի կենտրոններին մեթոդաբանական եւ խորհրդատավական աջակցության ցուցաբերում:

***ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Զարգացման կենտրոնն իրականացնում է նաեւ մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ծառայություններ իրականացնող մասնագետների վերապատրաստման ծրագրերի մշակում, նրանց կարողությունների շարունակական գնահատում եւ զարգացում, վերապատրաստված մասնագետների կողմից անցկացվող աշխատանքների մշտադիտարկում, մասնագիտական եւ մեթոդական աջակցություն եւ խորհրդատվություն (սուպերվիզիա),

ՀՀ զբաղմունքների միասնական դասակարգչի, մասնագիտական կրթական չափորոշիչների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի հենքի վրա մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի կառավարման վերաբերյալ հանրամատչելի նյութերի մշակում եւ տարածում,

ՀՀ մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի քաղաքականության, ռազմավարության, իրականացման ձեւերի ու մեթոդների բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում:

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ՖԻՆԱՆՍՆԵՐ

**ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարելի է ստանալ վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա:**

*Լեւոն Ֆիդանյան (51 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Վիճակախաղերի կազմակերպման լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 987-Ն որոշման համաձայն: Վիճակախաղերի կազմակերպման լիցենզիան տրամադրվում է անժամկետ: Վիճակախաղերի կազմակերպման լիցենզիան տրամադրվում է նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում (լիազոր մարմնի որոշմամբ կարող է երկարաձգվել եւս 23 աշխատանքային օրով) վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Հայտատուները վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 01.07.2004թ. թիվ 987-Ն որոշմամբ հաստատված հայտը եւ կից փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային տարբերակով: Հայտատուները կարող են լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1283-Ն որոշման:

***ՀՀ ֆինանսների նախարարություն***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Լիցենզիա ստանալու համար տարեկան պետական տուրքը կազմում է 600 000 000 ՀՀ դրամ: Հայտատուն վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա ստանալու համար Կենտրոնական գանձապետարանի 900005162137 հաշվեհամարին վճարում է 600 000 000 ՀՀ դրամ եւ կարող է լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացնել:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ պաշտոնական լրահոսից*

Ալբանիայում օրերս ձերբակալվել է արհեստական բանականությամբ գեներացված նախարարը: Նախարար Դիելլան (այդպես է նրա անունը) ձերբակալվել է մայրուղու շինարարության մրցույթի օպտիմալացման համար 14 բիթքոյն կաշառք ստանալու կասկածանքով:

Այսպիսի հետաքրքիր բաներ՝ տեխնոլոգիական արդի իրականությունում:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | - 1 - 5<br>+ 2 + 7 |
| Կոտայքի լեռներ | - 1 - 4<br>+ 2 + 6 |
| Կոտայքի նախալեռներ | + 1 + 3<br>+ 6 + 8 |
| Գեղարքունիք | - 1 - 6<br>+ 2 + 6 |
| Լոռի | - 3 + 1<br>+ 1 + 5 |
| Տավուշ | + 2 + 5<br>+ 7 + 10 |
| Արագածոտնի լեռներ | - 2 - 6<br>+ 2 + 6 |
| Արագածոտնի նախալեռներ | 0 + 4<br>+ 5 + 8 |

| | |
|---|---|
| Արարատ | + 1 + 4<br>+ 6 + 8 |
| Արմավիր | + 1 + 5<br>+ 7 + 10 |
| Վայոց ձորի լեռներ | - 1 - 5<br>+ 2 + 5 |
| Վայոց ձորի նախալեռներ | + 2 + 5<br>+ 7 + 9 |
| Սյունիքի նախալեռներ | - 3 + 2<br>+ 4 + 8 |
| Սյունիքի հովիտներ | + 2 + 7<br>+ 7 + 10 |
| ԼՂՀ | - 2 + 3<br>+ 7 + 10 |
| Երեւան | + 5 + 6<br>+ 7 + 9 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.12.2025**
Տպաքանակ՝ 3968
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*